Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Երանոսի հ.2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

«Ինֆորմատիկա»(2դասաժամ),«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» (5 դասաժամ), «Պատմություն»(6 դասաժամ) ,«Հասարակագիտություն» (11 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (10 դասաժամ), «Մաթեմատիկա» (12 դասաժամ) **առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 17-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թվականի** հուլիսի 1-**ին ՝ժամը 12:00-ին և 14:00-ին** ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի հ.1 միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Երանոս 6-րդ փողոց, 53 շենք : Տեղեկությունների համար զանգահարել 093213407 հեռախոսահամարով: